*Կ-894[4]-10.11.2015,06.09.2016-ՄԻ-010/3*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-135 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի չորրորդ, հինգերորդ, վեցերորդ եւ յոթերորդ պարբերություններում «իրավաբանական անձանց միություն» բառերը փոխարինել «ոչ առեւտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող հասարակական միավորում» բառերով:

***Հոդված 2.*** Օրենքի 26-րդ հոդվածի երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: